

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ

ՔՈԼԵՑ ՊՈՍԿ

Մուրիսյան Յուրա Խաչատրյանի

տնօրեն



Մուրիսյան

ՅՈՒՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

29 12

2016 թ.

Կ. Տ.

Մ. Երկրյան

**« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՑ »**

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ՍՈՎՈՐԱՂՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ
ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՄԱՐՏՈՒՆԻ 2017

ՀԻՄՆԱԿԱՆ ԷԹԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Էթիկական նորմերի կիրառությունն անընդհատ գործընթաց է:

«Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ»-ը սովորողների համար ապահովում է կրթական միջավայր՝ հիմնվելով փոխադարձ հարգանքի և վստահության վրա: Քոլեջը պատասխանատու է սովորողների կրթական և անձնական բարեկեցության ապահովման համար՝ միաժամանակ նրանց պարտավորեցնելով ցուցաբերել համապատասխան կրթական և անձնական վարքագիծ: Համապատասխան ուսումնական և անձնական վարքագիծն ընդգրկում է, բայց չի սահմանափակվում հետևյալ պարտականություններով.

- Սովորողի հիմնական նպատակը պետք է լինի ուսումը:
- Սովորողը պետք է հոգ տանի իր մասնագիտական գիտելիքի և հմտությունների ու կարողությունների զարգացման համար, որպեսզի հասնի մասնագիտական կրթական ծրագրով նախատեսված վերջնարդյունքին:
- Սովորողը չպետք է ստի ուսման ու քննության ընթացքում:
- Սովորողը երբեք չպետք է յուրացնի ուրիշների աշխատանքը և պետք է հարգի ուրիշների մտավոր ունակությունը:
- Ուրիշի աշխատանքը օգտագործելիս սովորողը պարտավոր է համապատասխան հղում կատարել և լինել ազնիվ:
- Սովորողը երբեք չպետք է խոչընդոտի ուսման և քննության ընթացքին՝ իր անհամապատասխան վարքով:
- Սովորողը պետք է աշխույժ կերպով հետամուտ լինի ուսման գործընթացին՝ ակտիվ պատասխանատվությամբ մասնակցելով ուսման գործընթացին:
- Սովորողը պետք է հարգի ուրիշների արժանապատվությունը, անձնական կյանքը և առհասարակ կյանքը ուսուցման կամ հետազոտությունների ընթացքում:
- Սովորողը պետք է լավագույն կերպով նպաստի խմբային աշխատանքների և գործնական պարապմունքների նպատակների իրագործմանը:
- Սովորողը պետք է ենթարկվի քոլեջի կողմից սահմանված բոլոր այն կանոններին և կանոնակարգերին, որոնք կապված են ուսման ընթացքի հետ:

Քոլեջի ուսանողներն իրավունք ունեն.

1.1. ստանալ գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ,

1.2 .մասնակցել ուսուցման որակը հավաստող գործառույթներին և գնահատել դասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը, բողոքարկել քոլեջի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

1.3 .անվճար օգտվել գրադարանից, ինտերնետ կապից, լաբորատորիաներից, տեղեկատվական պակոցներից, մասնակցել սեմինարներին և երիտասարդական հանձնաժողովներին,

1.4. հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղել երկրորդ մասնագիտական ուսուցման հետ և ստանալ երկրորդ որակավորում,

1.5. ստեղծել ուսանողական հասարակական կազմակերպություններ՝ ուսանողական կյանքին առնչվող հարցերի լուծման համար,

1.6. կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել քոլեջի կառավարման մարմինների աշխատանքներին,

1.7. ուսուցման առկա ձևով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ստանալ երկուսից ոչ պակաս արձակուրդ առնվազն 9 շաբաթ ընդհանուր տևողությամբ,

1.8. ստանալ տեղեկատվություն հաշվարկված գնահատականի և հաշվարկի սկզբունքների վերաբերյալ,

1.9. մասնակցել իր կրթության բովանդակության ձևավորմանը, ծանոթանալ ուսումնական պլանին և իրենց ներկայացված անհատական ուսումնառության ծրագրին,

1.10. ծանոթանալ քոլեջի կանոնադրությանը և իր իրավունքներին ու պարտականություններին վերաբերող այլ իրավական և ակադեմիական փաստաթղթերին, կնքել պայմանագիր քոլեջի հետ՝ ուսումնառության պայման վերաբերյալ,

1.11. քոլեջի կանոնադրությամբ՝ սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում ստանալ ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով (օրենքով սահմանված դեպքերում),

1.12. ընդմիջել ուսումը և գորակոչվել բանակ, իսկ գորակոչվելուց հետո, մեկ ամսվա ընթացքում, վերականգնել ուսումնական իրավունքները,

1.13. հանրակացարանի առկայության դեպքում, անհրաժեշտությունից ելնելով, սահմանված կարգով ստանալ բնակատեղ,

1.14. քոլեջում սահմանված կարգով, փոխել մասնագիտությունը, իսկ Հայաստանի Համրապետության կառավարության սահմանված կարգով՝ փոխադրվել այլ ուսումնական հաստատություն:

Կրթությունը անավարտ թողած անձն իրավունք ունի վերականգնել իր ուսանողական իրավունքը ուսումնական հաստատությունում:

Հաստատությունում ուսանողական իրավունքը վերականգնած ուսանողի ուսումնառությունը իրականացվում է՝

ա)վճարովի,

բ)անվճար (ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող ուսանողից, անվճար համակարգում ուսումնառած, նպատակային ու ակադեմիական արձակուրդից վերադարձաց ուսանողից, ինթպես նաև, երբ տվյալ տարվա համար հաստատությանը հատկացվել է միայն անվճար տեղեր և առկա է թափու տեղ):

Պետական ամփոփիչ ատեստավորում անցած ուսանողներին շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ, համապատասխան ներդիրով: 75% և ավել գերազանց գնահատականների առկայության , ՊՈՔ-ից և առարկայական պրակտիկայից

գերազանց գնահատականներ ունեցող ուսանողներին տրվում է գերազանցության դիպլոմ:

Ավարտական վկայականի ներդիրում նշվում են ուսումնասիրված դասընթացները՝ ժամաքանակները, առաջադիմության գնահատականները:

Քոլեջի ուսանողները պարտավոր են.

- 2.1. պահպանել կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները, բարձր պահել քոլեջի պատվն ու հեղինակությունը,
- 2.2. հաճախել դասախոսություններին, գործնական , սեմինար, լաբարատոր պարապմունքներին և մասնակցել պրակտիկաներին,
- 2.3. սահմանված ժամկետում կատարել ուսումնական պլանով նախատեսված ծանրաբեռնվածությունը,
- 2.4. տիրապետել ապագա մասնագետին անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին:

Ուսանողների ֆինասական իրավունքները և պարտականությունները և դրանց իրականացման կարգը

3.1 Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում մրցութային հիմունքով տեղադրվում է՝

3.1.1 Առաջին կուրսում պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ տարվա համար ուսման վարձի փոխհատուցման տեղում, ընդունելության կարգով միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված ուսանողին, հաջորդ ուսումնական տարի՝ նախորդ ուսումնական տարվա առավել բարձր արաջադիմություն ունեցող ուսանողին մրցութային հիմունքով, փոխատեղման արդյունքում:

3.1.2 Ու.ս. վարձավճարի լրիվ փոխհատուցում են ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված որոշակի սոցիալական խմբեր:

3.2 Պետական կրթաթոշակ ստացող ուսանողն իրավունք ունի տվյալ ամսվա կրթաթոշակը ստանալ մինչև հաջորդ ամսի 10-15:

3.3 Ու.ս կիսամյակի ընթացքում կրթաթոշակ ստացող ուսանողը կարող է գրկվել կրթաթոշակից նախատեսված պայմանները չապահովելու դեպքում:

3.4 Վճարովի ուսումնառության պայմաններում սովորողները պարտավոր են վճարել սահմանված ուսման վարձը՝ ուսումնառության յուրաքանչյուր կիսամյակի համար:

Ուսման վարձը չվճարելու դեպքում ուսանողը կարող է հեռացվել քոլեջից:

3.5 Ուսման վարձը կայուն է ուսումնառության ողջ ժամանակահատվածի համար՝ պայմանագրով նախատեսված ուսուցման ձևի՝ ըստ կուրսերի անընդհատ ուսումնառության դեպքում:

3.6 Ուսման վարձը ուսանողը պարտավոր է վճարել տվյալ կիսամյակում պարապմունքների փաստացի սկզբից ոչ ուշ քան մեկ ամսվա ընթացքում:

3.7 Կիսամյակում վճարված ուսման վարձը ենթակա չէ վերադարձման, բացառությամբ առողջական վիճակի պատճառով ուսումն ընդհատելու դեպքում:

3.8 Եթե վճարովի հիմքով սովորող ուսանողը հեռացվել է ուսման վարձ չմուծելու պատճառով, ապա վերականգնման ժամանակ պետք է վճարի և նախկին պարտքը, և տվյալ կիսամյակի համար նախատեսված ուսման վարձը:

3.9 Վճարովի ուսուցմամբ սովորող ուսանողի ավել վճարած ուսման վարձը, որպես կանխավճար, փոխանցվում է որպես հաջորդ կուրսի ուսման վարձ կամ ենթակա է վերադարձման:

3.10 Զինվորական ծառայության մեկնելու կապակցությամբ և տարեկետման պատճառով ուսումն ընդհատելու և հետագայում սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնելու դեպքում ուսման վարձը վճարվում է նախկին պայմանագրով նախատեսված չափով:

3.11 Ուսման վարձը ուսանողը մուծում է փոխանցման կարգով՝ սպասարկող բանկում բացված հաշվարկային հաշվին:

Ուսանողները պարտավոր են խնամքով վերաբերել քոլեջի սեփականությունը /գույք, ուսումնական ձեռնարկներ, գրքեր, սարքավորումներ և այլն/: Քոլեջի սեփականություն հանդիսացող գույքին պատճառած վնասի համար ուսանողը կրում է նյութական պատասխանատվություն՝ գործող օրենսդրությանը համապատասխան: Ուսանողներին, առանց դեկավարության թույլտվության, արգելվում է լաբորատորիաներից և ուսումնական շենքերից դուրս հանել տարբեր սարքավորումներ:

Ուսանողները պետք է լինեն կարգապահ և մաքրասեր ինչպես ուսումնական հաստատությունում, այնպես էլ՝ փողոցում ու հասարակական վայրերում:

Քոլեջի ուսանողների բարձր առաջադիմության, հասարակական կյանքին ակտիվ մասնակցության համար սահմանված են հետևյալ խրախուսանքները.

ա/ շնորհակալության հայտարարում,

բ/ պատվոգրով պարգևատրում,

գ/ նվերով պարգևատրում:

Խրախուսանքի մասին տրվում է քոլեջի տնօրենի հրաման՝ համաձայնեցված ուսանողական խորհրդի հետ՝ այդ մասին ուսանողությանը տեղյակ պահելով խմբի կամ ընդհանուր ժողովում: Խրախուսանքի մասին հրամանի քաղվածքը պահվում է ուսանողի անձնական գործում:

Այն ուսանողները, որոնք չեն կատարում ուսումնական պլանների պահանջները, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են ուսումնական գործընթացի ժամանակացույցը, քոլեջի կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները, տնօրենի որոշմամբ կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև հեռացվելը /ազատվելը/:

Ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

ա/դիտողություն,

բ/ նկատողություն,

գ/ խիստ նկատողություն,
դ/ հեռացում /ազատում/:

Ուսանողը քուլտից հեռացվում /ազատվում/ է.

- Իր դիմումի համաձայն,
- Այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու դեպքում,
- Եթե կոպիտ կերպով խախտել է ներքին կարգուկանոնը,
- Ժամանակին չի վճարել տվյալ ուսումնական տարվա /կիսամյակի/ ուսման վարձը:

Կարգապահական տույժերը կիրառվում են անմիջական զանցանքի հայտնաբերման պահից, սակայն մեկ ամիս ոչ ուշ /չհաշված արձակուրդում գտնվելու ժամանակը/: Տույժը չի կարող կիրառվել, եթե զանցանքի կատարման օրից անցել է վեց ամսից ավելի ժամանակ: Եթե ուսանողը մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվում, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված:

Արգելվում է ուսանողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

Քուլտում ուսումնական պարապմունքներն անց են կացվում սահմանված կարգով՝ հաստատված ուսումնական պլաններին և ծրագրերին համապատասխան: Ուսումնական պլաններով սահմանված արձակուրդի տևողության կրճատում չի թույլատրվում:

Ուսումնական դասացուցակը կազմվում է կիսամյակի համար և փակցվում է հաջորդ կիսամյակը սկսվելուց ոչ ուշ, քան 10 /տաս/ օր առաջ:

Քուլտում դասի /գույգ ակադեմիական ժամի / տևողությունը 80 /ութսուն/րոպե է: Ուսումնական պարապմունքների սկզբի և ավարտի մասին դասախոսները և ուսանողները տեղեկացվում են զանգի ազդանշանով: Պարապմունքների ակադեմիական ժամի ավարտից հետո սահմանված է ընդմիջում՝ առնվազն 10 /տասը/ րոպե տևողությամբ:

Զանգից հետո ուսանողի մուտքը լսարան արգելվում է՝ առանց դասախոսի թույլտվության: Պարապմունքները սկսելուց հետո բոլոր ուսումնական և դրան կից տարածքներում պետք է ապահովված լինի լռություն և կարգապահություն՝ ուսումնական պարապմունքների բնականոն անցկացման համար: Չի թույլատրվում ընդհատել պարապմունքները, դրանց անցկացման ժամանակ մտնել լսարան և դուրս գալ լսարանից:

Ուսումնական մասնաշենքում արգելվում է բարձրաձայն խոսակցությունը, աղմուկը, պարապմունքների ժամանակ՝ էլեկտրոնային սարքերի և բջջային հեռախոսների օգտագործելը: Քուլտում խստիվ արգելվում է ծխելը և ոգելից խմիչքներ օգտագործելը: Յուրաքանչյուր սովորող անձամբ տեղեկացվում է իր բարոյական կանոնների և պարտականությունների մասին:

Կատարող՝ ուս. մաս

